12րդ կէտում ասւում էր, որ այս համաձայնութիւնը արդելք չէ, որ հայերը հետապնդեն իրենց պահանջները հաշտութեան վերջաժողովի առջև:

Այս համաձայնութեան հիման վրա, անգլիական զինուորական նահանգապետն ու հայկական գլխաւոր պաշտօնէութիւնը մեկնեցին Կարս: Բայց հայկական իշխանութեան երևալը Կարսում Շուրայի կողմից ընդունեց թշնամաբար ու սպառնալիքներով, և անգլիական նահանգապետի խորհրդով հայերը հեռացան Աղեքսանդրապոլ: Այսպիսով, անգլիացիները, մի տեսակ, ճանաչեցին Շուրայի իշխանութիւնը:

Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների մահմետականները դիմեցին Փարիզի Խորհրդաժողովին, Ուիլսընին, Պուանկարէին ու Լոյդ Ջորջին՝ բողոքելով իրենց շրջանները հայերին և վրացիներին յանձնելու դէմ և պահանջելով ճանաչել իրենց անկախութիւնը: Նրանք յայտնում էին, որ հայերը կոտորել են հարիւր հազար մահմետականներ:

Այս դէպքը, ինչպէս և ուրիշ առիթներով անգլիացիների ցոյց տուած թրքասիրութիւնը սաստիկ յուզում ու զայրոյթ պատճառեց հայկական շրջաններում: Մարտ 6-ին, Հ. Հ. Պատւիրակութեան գրած մի նամակում, արտ. գործոց նախարար Ս. Տիգրանեանը երկարօրէն, կանգ է առնում այն օրերի անգլիացիների հետևած քաղաքականութեան վրա: «Կարսի դէպքը, գրում է նա ի միջի այլոց, շատ վատ և ընդարձակ հետևանքներ ունեցաւ, ինչպէս և սպասում էին: Թուրքերը տեսան, որ բաւական է ցուցադրել որև է հակառակութիւն և բողոք հայերի, Հայաստանի կառավարութեան դէմ, և Անգլիան իսկոյն և եթ հանդէս կը գայ զսպելու, կասեցնելու մեր կառավարութեան ամէն մի ներգործական քայլն ու ծրագիրը: Բրիտանական զօրահրամանատարութիւնը Անդրկովկասի մի շարք ակտերով աւելի և աւելի ոյժ է տալիս թուրքերի այդ համոզմանը:

Մեր զօրամասերը առաջ էին ընթանում դէպի Շարուր, Նախիջևան, Ջուլֆա՝ օսմանեան զօրքերի դատարկած այդ վայրերը գրաւելու. թուրքերը դիմադրում էին: Վոլչի վարօտայից (Երևանի և Շարուրի ուեզդների սահմանակից) մեր զօրամասը յետ եկաւ մինչև Դաւալու (հայ-վրացական պատերազմի ժամանակ), յետոյ պատրաստուեց նորից առաջ գնալ: Եկան Շարուրի և Նախիջևանի թուրքերի ներկայացուցիչները. մեր կառավարութեան հետ բանակցեցին. համաձայնեցինք, թէ 8—10 օր մեր զօրքը Դաւալուից առաջ չի շարժւի, մինչև որ նրանք կերթան կը պատրաստեն խաղաղ ժողովուրդը, թէ հայոց զօրքը իրենց որև է վնաս չի հասցնելու, և կը դան ընդառաջ հայ զօրքն ու հայ ադմինիստրացիան խաղաղ և հաշտ ընդունելու. բայց վրա հասաւ անգլիական կապիտան Լօտէնը, անցաւ Նախիջևան տեսնելու՝ ինչ կայ, ինչ չկայ... և իր զեկուցման հետևանքով նշանակուեց Նախիջևանի բրիտանական զօրական նահանգապետ և փոխ-գնդապետ, յետոյ եկաւ Երևան պահանջելու, որ մեր զօրքերը յետ քաշուեն նոյնիսկ Դաւալուից հիւսիս... Ոչ առանց դժուարութեան համաձայնութեան եկանք երիտասարդ փոխ-գնդապետի հետ, որ մինչև Վոլչի Վարօտան մնայ մեր ադմինիստրացիան, բայց մեր զօրքը յետ կը բերենք այդ շրջանից՝ թողնելով մի փոքրիկ խումբ (50 հոգի) Դաւալուում. բրիտանական մի զօրամաս կը լինի այդ տեղը, որը կը պաշտպանէ կարգը և խաղաղութիւնը: Ուրեմն, Շարուրն ու Նախիջևանն էլ մեր ձեռքից գնաց (թո՛ղ ժամանակաւորապէս), դառաւ բրիտանական զօրական նահանգապետութիւն (Կարսի օրինակով), և մենք